



## Մեր կարգախոսը՝ «Մաքուր Հայաստան»

Մարտի 24-ին տեղի է ունեցել «Մոլորակի ժամը 2017» համաշխարհային բնապահպանական միջոցառմանը Հայաստանի մասնակցությանը նվիրված մամուլի ասուլիսը: «Բնության համաշխարհային հիմնադրամի» (WWF) հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը տեղեկացրել է, որ «Մոլորակի ժամը» համաշխարհային արշավի նպատակն է հասարակությանը, գործարարներին և այլ շահագրգիռ կողմերին իրազեկել բնապահպանական հիմնախնդիրների մասին: Այդ նպատակով կոչ է արվել մարտի 25-ին ժամը 20:30-ից 21:30-ին լույսերը մեկ ժամով անջատել՝ հանուն օրախնդիր բնապահպանական խնդիրների բարձրաձայնման:

Հարունակությունը էջ 21



## • Մեր կարգախոսը՝ «Մաքուր Հայաստան»

Սկիզբը՝ էջ 1 /

4. Մամվելյանը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր երկիր ազատ է որոշելու օրվա սեփական կարգախոսը: Հայաստանում «Մոլորակի ժամ»-ի այս տարվա գլխավոր թեմա է ընտրվել «Մաքուր Հայաստան»-ը, որի նպատակն է անցկացնել աղբի մաքրման համազգային արշավ, որին կներգրավվեն հասարակության լայն շերտեր, ինչպես նաև բազմաթիվ շահագրգիռ կառույցներ, տեղական և միջազգային կազմակերպություններ: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ Աշոտ Վարդևանյանը, կոչ անելով միանալ «Մոլորակի ժամ» միջոցառմանը, տեղեկացրել է, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ ՀՀ բնապահպանության և տարածքային կառավարման և զարգացման նախարարությունները մինչև 2017 թվականի ապրիլի 17-ը պետք է մշակեն և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնեն «Մաքուր Հայաստան» նախաձեռնության գործողությունների ծրագիրն ու ժամանակացույցը: Նախատեսվում է նաև նախաձեռնության գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը ներկայացնել հանրային քննարկման՝ ընդգրկելով համապատասխան հասարակական կազմակերպություններին: Ա. Վարդևանյանը նշել է, որ միջոցառումը չի սահմանափակվելու միայն աղբահավաքությամբ, այն ունենալու է համակարգային ու շա-

րունակական բնույթ՝ ընդգրկելով իրավական կարգավորումներ և էկոլոգիական միջոցառումներ՝ ուշադրության կենտրոնում պահելով առկա բնապահպանական խնդիրները:

Տեղեկացվել է, որ «Բնության համաշխարհային հիմնադրամի» (WWF)-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացվել է համապատասխան հաշվեհամար (Հ/Հ 002 100477 002 /AMD/), որին փոխանցված ողջ հատույթն ուղղվելու է «Մաքուր Հայաստան» միջոցառմանը: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի տարածքային ներդրումային քաղաքականության վարչության պետ Արտաշես Բախշյանը նշել է, որ ասուլիսով մեկնարկում է «Մաքուր Հայաստան» ծրագիրը, որի շրջանակներում արդեն կատարվում են աղբավայրերի գույքագրման աշխատանքներ և առաջիկայում կմեկնարկեն մաքրման աշխատանքները: Բանախոսը տեղեկացրել է, որ ծրագիրը միջանկյալ միջոցառում է, իսկ ՀՀ կառավարության կողմից 2016 թվականին հաստատված ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացվելու են խնդրի հիմնարար և համակարգային կարգավորման միջոցառումներ:

## ՄԱԿ-ի գրասենյակի ճեմասրահում հայկական մրգի պտուղների եւ ծաղիկների «բույրն էր» տարածվել



Անտառների և ծառի համաշխարհային օրվա առթիվ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի ճեմասրահում բացվել է ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդատու, ագրոէկոլոգ-լուսնակարիչ Գալուստ Նանյանի «Հայկական միրգ. Ծաղիկից մինչև պտուղ» լուսանկարչական ցուցահանդեսը: Հեղինակի խոսքով ցուցահանդեսը բացվում է երկրորդ անգամ և այս անգամ ավելի երկար ժամանակով կցուցադրվի հասարակությանը. «Լուսանկարներն արել են ՀՀ-ի բոլոր մարզերում, այդ թվում նաև մայրաքաղաք Երևանում: Օրինակ՝ մարտին ծիրանենուն նկարելու համար հասել են «Շիկահող» պե-

տական արգելոց, իսկ մասուրը նկարելու համար՝ «Արևիկ» ազգային պարկ: Լուսանկարների 30%-ը նկարել են մեր այգում (Էջմիածնի շրջան)», - ասել է Գ. Նանյանը, և հավելել. «Գլխավորը ծաղիկները չեն, այլ այն պտուղները, որոնք արդյունքում առաջանում են: Ինչպես և մարդու մեջ. ոչ թե երեխան է կարևոր, այլ թե ինչպիսի մարդ կդառնա նա ապագայում: Ահա այս միտքն էի ուզում փոխանցել»: ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հասարակական տեղեկատվության դեպարտամենտի ղեկավար Արմինե Հալաջյանի խոսքով, անտառների ու ծառերին պետք է հնարավորինս խնամքով վերաբերվել, որպեսզի դրանից չտուժեն բնությունն ու մարդիկ. «Հատկապես կարևոր են պտղատու ծառերը, հենց դրանք են ներկայացված ցուցահանդեսին»: Ցուցահանդեսը կտևի մինչև ապրիլի 10-ը: Ցուցահանդեսի բացումից հետո Գ. Նանյանը նաև բնապահպանական դասընթացով հանդես է եկել Արարատի մարզի Արգավանո գյուղի հանրակրթական դպրոցի աշակերտների համար: Թեման եղել է ոչ միայն Հայաստանի անտառները, այլ նաև բնության հատուկ պահպանվող տարածքները: Ցուցահանդեսի ավարտին Գ. Նանյանն իր կողմից դպրոցի տնօրինությանն է նվիրել «Անտառի բարիքները» և «Կանաչ Հայաստան» պատկերազարդ գրքերը, որոնք պատմում են Հայաստանի հարուստ կենսաբազմազանության մասին:

## Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարումը դրվում է նոր հիմքերի վրա



«Ձգիտությունների ազգային ակադեմիայում ՀՀ բնապահպանության նախարարության և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ տեղի է ունեցել Ջրի համաշխարհային օրվան նվիրված աշխատաժողով: Միջոցառումն նախաձեռնել էր ՀՀ ԳԱԱ Յ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանը: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ողջունելով ներկաներին, անդրադարձել է ջրային ռեսուրսների կարևորությանը և դրանց ռացիոնալ օգտագործման ամհրաժեշտությանը: ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն իր ելույթում ներկայացրել է պետության կողմից ջրային ռեսուրսների կառավարման պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: «Կերջին տարիներին Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում իրականացվել են էական օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչի արդյունքում ապահովվել է դրանց համապարփակ կառավարման սկզբունքների ներդրումը և կիրառումը: Ջրային ռեսուրսների ոլորտում տարվում է միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքականություն: Այդ գործընթացները համահունչ են Եվրամիության համապատասխան դիրեկտիվներին, ինչը բարձրացնում է մեր կողմից իրականացվող գործողությունների արդյունավետությունը», - նշել է Խ. Հակոբյանը: Բնապահպանության նախարարի տեղակալն անդրադարձել է նաև Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնման և պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումներին: «Կերջին տարիներին Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում իրականացվել են էական օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչի արդյունքում ապահովվել է դրանց համապարփակ

կառավարման սկզբունքների ներդրումը և կիրառումը: Ջրային ռեսուրսների ոլորտում տարվում է միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքականություն: Այդ գործընթացները համահունչ են Եվրամիության համապատասխան դիրեկտիվներին, ինչը բարձրացնում է մեր կողմից իրականացվող գործողությունների արդյունավետությունը», - նշել է Խ. Հակոբյանը: Բնապահպանության նախարարի տեղակալն անդրադարձել է նաև Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնման և պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումներին: Նշելով, որ Ջրի համաշխարհային օրվա այս տարվա կարգախոսն է «Կեղտաջրերի մաքրում»՝ Խ. Հակոբյանը տեղեկացրել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ ՀՀ կառավարության 2017 թ.-ի ծրագրում, ջրավազանային կառավարման պլանների հաստատման հետ զուգահեռ ընդգրկվել էր նաև ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակման առաջարկը, և համապատասխան օրենքի նախագիծն արդեն մշակված է և նույն օրը, միևնույն օրը հետո ներկայացվելու է մասնագետներին: Իրենց երկրների ջրային ոլորտներին են անդրադարձել ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերը և Իտալիայի Հանրապետության դեսպան Ջովաննի Ռիչուլլին: Դեսպանները ներկայացրել են նաև Եվրամիության և մասնավորապես՝ իրենց երկրների կողմից ջրային ռեսուրսների պահպանման և կառավարման ուղղությամբ մեր պետությանը ցուցաբերվող աջակցության ծրագրերը: Խորհրդատվական ընթացքում գիտնականները և մասնագետները ներկայացրել են ոլորտում առակա վիճակը, իրականացվող միջոցառումները և հնչեցրել առաջարկներ:

# Բնապահպանական խախտումների դիմաց վարչական տուգանքներն այս շաբաթ



ՀՀ բնապահպանական պետական տեսչության կողմից 20.03 - 24.03.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 370,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 6 որոշում և հաշվարկվել 640,98 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

### Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 3 որոշում՝ 150,0 հազ. դրամ ընդհանուր գումարի և հաշվարկվել է 628,5 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝

Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 2 ֆիզիկական անձանց նկատմամբ ապօրինի հատված 4 ծառերի համար կայացվել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում և հաշվարկվել է 574,5 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Շիրակի տարածքային բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի ծառահատման դեպքի համար կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել 54,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

### Մթնոլորտային օդի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50,0 հազ.

դրամ գումարով, որից՝

Կոտայքի տարածքային բաժնի կողմից մթնոլորտային օդն աղտոտող գարշահոտ աղբի տեղադրման համար 1 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում՝

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 100,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 12,48 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝

Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 1 ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 100,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 12,48 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

### Ապօրինի որսի իրականացման համար՝

Արարատի տարածքային բաժինը ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնից ապօրինի 11 հատ արտույտ որսալու դեպքի փաստով 1 ֆիզիկական անձի նկատմամբ կայացրել է 70,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի որոշում:

Ընդհանուր առմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կիրառած պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,83 մլն. դրամ գումար:

# Օրենքը այսուհետև կկանոնակարգի կեղտաջրերի մաքրման աշխատանքները

ՀՀ կառավարության 2017 թ-ի ծրագրում ընդգրկված ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակման հարցի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումը: Միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը քննարկման մասնակիցներին ներկայացրել է Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության և Ասիական զարգացման



ման բանկի փորձագետների կողմից իրականացված օրենքի մշակման ընթացակարգային հարցերը: Ներկայացվել է օրենքի նախագիծը, ինչի շուրջ ծավալվել է մասնագիտական քննարկում: Աշխատանքային խմբի անդամների կողմից հնչել են առաջարկներ, որոնք հաշվի կառնվեն նախագծի լրամշակման ժամանակ: Որոշվել է օրենքի նախագիծը կրկին քննարկել շահագրգիռ զերատեսչությունների հետ, ինչին կհաջորդի սահմանված ընթացակարգով նախագծի շրջանառումը և հանրային քննարկումների կազմակերպումը:

## Ո՛րտեղ են ուղղորդվելու ընդերքօգտագործողների կատարած վճարները



« Բնապահպանության նախարարության ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչությունը ՀՀ կառավարության 23.08.2012 թ.-ի N 1079-Ն և ՀՀ կառավարության 2013 թ. հունվարի 10-ի N 22-Ն որոշումներով սահմանված գործառույթների իրականաց-

ման արդյունքում արտաբյուջետային հաշիվները 01.01.2017-15.03.2017թթ. ընթացքում համալրվել են 84.076 մլն.դրամով (շրջակա միջավայրի պահպանության դրամագումար) և 11.7 մլն.դրամով (մշտադիտարկումների իրականացման համար վճարումներ):

Նշված դրամական միջոցներն ուղղվելու են օգտակար հանածոների արդյունահանման նախագծերով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրերով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների: Դրամական միջոցներն ուղղվելու են նաև օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակայանների տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացմանը:

## Կոշտ թափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանի քննարկում Եվրամիության փորձագետների մասնակցությամբ



« Անի Պլազա» հյուրանոցում տեղի է ունեցել «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանի, ճանապարհային քարտեզի և երկարաժամկետ ներդրումային ծրագրի» Ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ զեկույցը թեմայով աշխատաժողով-քննարկումը: Աշխատաժողովի նպատակն էր ներկայացնել և քննարկել ՌԷԳ զեկույցը՝ ներառյալ վերլուծության հիմնական առաջարկներն և առաջարկվող կանխարգելիչ գործողությունները՝ ուղղված Հայաստանում աղբի կառավարման ոլորտին: Մասնակիցներին ներկայացվել են ՌԷԳ-ի ընթացակարգով արդեն իսկ արված քայլերը, ինչպես նաև ծրագրում կիրառված մեթոդաբանությունը: Քննարկման արդյունքները կներառվեն վերջնական զեկույցում: Աշխատաժողովը կօժանդակի ազգային կարողությունների զարգացմանը՝ ՌԷԳ հիմնական շահառուների, որոշում կայացնողների, պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և փորձագետների շրջանում: Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խ. Հակոբյանը, ով ներկայացրել է իրակա-

նացված աշխատանքները: «ՌԷԳ-ի գործընթացում մենք հրավիրել ենք բոլոր շահագրգիռ կողմերին և մեր գործողությունների մասին տեղյակ պահել նրանց: Այսօր ամփոփում ենք կատարված աշխատանքները: Այս քննարկումը նաև կաջակցի ՀՀ Բնապահպանության, Տարածքային կառավարման նախարարություններին հետևել և իրականացնել «Հայաստանում կոշտ թափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանի, ճանապարհային քարտեզի և երկարաժամկետ ներդրումային ծրագրի» ՌԷԳ-ի արդյունքում մշակված առաջարկությունների իրականացմանը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Առայսօր չկար ռազմավարական էկոլոգիական գնահատումը ՀՀ-ում կիրարկելու նախադեպ և այն առաջին ծրագիրն է, որի համար մենք հայցեցինք Եվրամիության աջակցությունը և նրանց փորձագետների հետ իրականացրեցինք այդ գնահատման գործընթացը» - նշել է Խ. Հակոբյանը իր խոսքում: Ծավալվել է շահագրգիռ և արդյունավետ մասնագիտական քննարկում, ինչի արդյունքում ամրագրվել են մի շարք առաջարկություններ:

# Օզոնի շերտի պաշտպանությունը մարդկության առաջնահերթ մտահոգություններից է



Չ եմք ներկայացնում Մոնրեալի արձանագրության Կիզալիի ուղղման վերաբերյալ հաճախակի տրվող հարցերը:

### 1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Կիզալիի Ուղղումը

Կիզալիի ուղղումը՝ «Օզոնային շերտը քայքայող նյութերի (ՕՔՆ) մասին» Մոնրեալի արձանագրության ուղղումն է: Ուղղումն ընդունվել է Մոնրեալի արձանագրության Կողմերի 28-րդ հանդիպմանը, որը տեղի է ունեցել 2016 թ.-ի հոկտեմբերի 15-ին Ռուանդայի մայրաքաղաք Կիզալիում: Այս ուղղումով արձանագրությամբ կարգավորվող նյութերի ցուցակում ավելացվել են հզոր ջերմոցային գազերը՝ հիդրոֆտորածխածինները (ՀՖԱ): Ուղղումն ուժի մեջ կմտնի 6-րդ կետում նշված պայմանների կատարումից հետո: Ուղղումն ընդունելու, որին կից ներկայացված է ուղղման տեքստը, և ՀՖԱ-ների փուլային փոխարինման վերաբերյալ որոշումները տեղադրված են Օզոնի քարտուղարության կայքում հետևյալ հղումներով:

### 2. Որո՞նք են Կիզալիի Ուղղման ակնկալիքները

Ուղղման շնորհիվ Մոնրեալի արձանագրության շրջանակներում կկրճատվի ՀՖԱ-ների գործածումը: Օզոնաքայքայիչ նյութերին այլընտրանք հանդիսացող ՀՖԱ-ների օգտագործումը արագորեն աճում է: ՀՖԱ-ների փուլային փոխարինման միջոցով ակնկալվում է կանխել մոտ 105 մլն տոննա ածխածնի երկօքսիդին համարժեք ջերմոցային գազերի արտանետումները, ինչը կօգնի մինչև 2100 թ.-ը ակնկալվող ջերմաստիճանի գլոբալ բարձացումը նվազեցնել մինչև 0.5 աստիճանով՝ զուգահեռ շարունակելով պահպանել օզոնային շերտը:

### 3. Ի՞նչպե՞ս է աշխատելու Կիզալիի Ուղղումը

Ուղղման համաձայն՝ Մոնրեալի արձանագրության կողմերը պարտավորվում են աստիճանաբար նվազեցնել ՀՖԱ-ների օգտագործումը՝ 2040 թ.-ին այն կրճատելով 80–85%-ով: Առավել զարգացած երկրների կողմից առա-

ջին կրճատումներն ակնկալվում են 2019 թ.-ին: Ջարգացող երկրների մեծամասնությունը, այդ թվում նաև՝ Հայաստանը, պետք է սառեցնեն ՀՖԱ-ների օգտագործման մակարդակը 2024 թ.-ին, իսկ որոշ զարգացող երկրներ դա պետք է անեն 2028 թ.-ին:

### 4. Որո՞նք են Կիզալիի Ուղղումն ընդունելու հետագա քայլերը

Օզոնի քարտուղարությունը ուղարկելու է Մոնրեալի արձանագրության Կիզալիի Ուղղման տեքստը պաշտոնական բոլոր վեց լեզուներով Դեպոզիտարիա, իսկ վերջինս՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: Տեքստի նախագիծ տարբերակը այդ վեց լեզուներով հասանելի է Օզոնի քարտուղարության պաշտոնական կայքում:

Ուղղման տեքստը ստանալուց հետո, Դեպոզիտարիան կպատրաստի Ուղղման վավերացված պատճենները, որոնք կներկայացվեն Կողմ երկրներին:

### 5. Ի՞նչ է վավերացումը

Վավերացումը (ընդունում կամ հաստատում) որոշում է, որն ընդունվում է միջազգային համաձայնագրի կողմ հադիսացող երկրներից մեկի կողմից հաստատելու համար, և որով նա տալիս է իր համաձայնությունը պայմանագրային պարտավորությունների առումով: Կիզալիի ուղղումն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է, որպեսզի այն վավերացվի առնվազն 20 երկրների կողմից:

### 6. Ի՞նչ է անհրաժեշտ Կիզալիի Ուղղման ուժի մեջ մտնելու համար

Կիզալիի Ուղղումը ուժի մեջ է մտնելու 2019 թ.-ի Հունվարի 1-ին, եթե այն վավերացվի Մոնրեալի արձանագրության առնվազն 20 երկրների կողմից: Եթե նշված ժամկետում այս պայմանը կատարված չլինի, ապա ուղղումը ուժի մեջ կմտնի 20-րդ երկրի կողմից վավերացումն ավարտելուց հետո 90-րդ օրը:

### • Օգոնի շերտի ղաճճդանությունը մարդկության առաջնահերթ մճահոգություններից է

Սկիզբը էջ 6 /

#### 7. Ինչպե՞ս կարելի է ծանոթանալ Կիզալիի Ուղղման վավերացմանը՝ կարգավիճակին

ՄԱԿ-ի Միջազգային համաձայնագրերի պահեստավորման կայքում պահպանվում է միջազգային համաձայնագրերի վավերացման կարգավիճակի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, այդ թվում՝ Կիզալիի Ուղղման վերաբերյալ: Օգոնի քարտուղարությունը ևս տեղադրում է Մոնրեալի արձանագրության և դրա ուղղումների վավերացման վերաբերյալ տեղեկատվություն իր կայքում:

#### 8. Մինչև երբ իմ երկիրը կարող է իրականացնել այս գործընթացը

Կիզալիի Ուղղման վավերացումը Մոնրեալի արձանագրության կողմ երկրների կողմից պետք է իրականացվի հնարավորինս շուտ, որպեսզի հնարավոր դառնա Ուղղման ուժի մեջ մտնելը մինչև 2019 թ.-ը:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել քարտուղարություն:

Այս փաստաթուղթը պատրաստվել է Օգոնի քարտուղարության կողմից՝ հանրային իրազեկման նպատակով: Այն կազմվել է 2016 թ.-ի նոյեմբերի 3-ին և կթարմացվի անհրաժեշտության դեպքում: Այս փաստաթղթում առկա տեղեկատվությունը չի փոխարինում պաշտոնական փաստաթղթերին և որոշումներին՝ կապված Կիզալիի



Ամբերդի օգոնի չափումների կայանը

Ուղղման հետ:

Տեղեկացնենք նաև, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը սահմանված կարգով տվել է Ուղղման վավերացման գործընթացի մեկնարկը:

## Հայտարարություն

# ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹ

ՀՀ բնապահպանության նախարարության Օգոնի ազգային կենտրոնը հայտարարում է «Պահպանենք օգոնային շերտը» թեմայով նկարչական մրցույթ 6-16 տարեկան երեխաների համար: Աշխատանքներն ընդունվում են մինչև ընթացիկ տարվա մայիսի 20-ը՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային (JPEG, բարձր որակ) տարբերակներով: Մրցույթի արդյունքները կամփոփվեն Ժյուրիի կողմից և հունիսի 5-ին՝ Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օրը, կհայտարարվեն հաղթողները: Լավագույնը ճանաչված 3 աշխատանքներով կթողարկվեն փազվներ, իսկ մասնակից բոլոր երեխաների համար կկազմակերպվի շրջայց Բնության պետական թանգարում:

Բոլոր նրանք, ում հետքաբքրեց մեր հայտարարությունը, կարող են կապ հաստատել Օգոնի ազգային կենտրոնի աշխատակիցների հետ մանրամասներին ծանոթանալու համար: Օգոնային շերտի մասին հանրամատչելի տեղեկատվություն կարող էք գտնել մեր կայքի Հրատարակումներ բաժնից: Աշխատանքները խնդրում ենք ներկայացնել հետևյալ հասցեներով՝



Փոստով ուղարկելու համար՝  
**Բնապահպանության նախարարություն**  
**ՀՀ, ք. Երևան-0010, Կառավարական շենք3,**  
**Հանրապետության հրապարակ**

Էլեկտրոնային հասցեին ուղարկելու համար՝  
**info@armozone.am**

# Ջրի համաշխարհային օրը Բնության թանգարանում

Մարտի 22-ին Հայաստանի բնության պետական թանգարանում Ջրի համաշխարհային օրվա կապակցությամբ տեղի է ունեցել «Բնապահպանական գիտելիքների օր» խորագրով միջոցառում: Միջոցառմանը զեկույցով հանդես է եկել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության աշխատակից Դավիթ Մեջլումյանը, ով ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ուղղորտում կատարված և կատարվելիք աշխատանքները: «Veolia ջուր» ընկերության ներկայացուցիչ, ԵՊՀ-ի դասախոս հիդրոլոգ Արտաշես Աղինյանը նեկայացրել է «Veolia ջուր» ընկերության գործունեության հիմնական ուղղությունները ու նպատակները, ինչպես նաև վարել դասախոսություն ջրերի պահպանու-



թյան, նրա հիմնական հատկությունների վերաբերյալ: Միջոցառմանը ներկա են եղել նաև Երևանի Ս. Սպանդարյանի անվան թիվ 24 հիմնական դպրոցի աշակերտները, ովքեր հանդես են եկել երաժշտական ելույթներով: Միջոցառման ավարտին մասնակիցների և հյուրերի համար ցուցադրվել է ջրի կարևորության և երկրագնդի բնակչությանը ջրի կենսական, փաստացի և անհրաժեշտ մակարդակների ապահովման խնդիրների վերաբերյալ պատմող ուսուցողական տեսաֆիլմ:

# «Անտառը եւ էներգիան»

## Անտառների միջազգային օրը



Մարտի 21-ը Անտառների միջազգային օրն է: 2017 թ.-ի օրվա թեման է «Անտառը և էներգիան»: Օրվա առթիվ ՄԱԿ-ի պաշտոնական կայքում գրված է. «Փայտային վառելիքը աշխարհում ապահովում է վերականգնվող էներգիայի 40 տոկոսը: Նույնքան էներգիա են ապահովում արևային, հողմային և ջրային էներգիաները միասին վերցրած: ...Աշխարհում՝ մեծամասամբ զարգացող երկրներում, շուրջ 900 միլիոն մարդ ժամանակավոր կամ մշտական կարգով աշխատում է անտառային էներգետիկայի ուղղությամբ: ...Վառելափայտային էներգետիկայի ուղղությամբ արդիականացումը կարող է առողջացնել

գյուղական համայնքների տնտեսությունը և խթանել ձեռնարկատիրական գործունեությունը: ...Անտառների պտտեցիալը որպես վերականգնվող էներգիայի գլխավոր աղբյուր բացահայտելու համար անհրաժեշտ է ավելացնել ներդրումների և տեխնոլոգիական ինովացիաների մակարդակը և անտառները կայուն կառավարել: Դրանք ներդրումներ են մեր կայուն ապագայի համար: Որպես էներգետիկ ռեսուրս՝ Հայաստանում վառելափայտը կենսազանգվածի հետ միասին կազմում է էներգետիկ սեկտորի 5,1 %-ը: Սա մեծ ծանրաբեռնվածություն է անտառների վրա, քանի որ Հայաստանը սակավանտառ երկիր է, որտեղ անտառածածկը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տվյալներով կազմում է 11,2 %, իսկ տարբեր անկախ փորձագետների հաշվարկներով՝ 7-ից 10 %: Հայաստանում անտառն օգտագործվում է որպես վառելափայտ, սակայն անտառի վերականգնման համար գործուն քայլեր չեն իրականացվում, պետությունը միջոցներ չի տրամադրում: Սուտ ժամանակաշրջանում հնարավոր չէ Հայաստանում անտառային էներգետիկա զարգացնել: Այդ օրվան հասնելու համար ՀՀ կառավարությունը դեռ պետք է կարողանա Հայաստանի անտառածածկը հասցնել 20,1 %-ի, ինչը հանձն է առել որպես կլիմայի փոփոխության մեղմման միջոցառում: Իսկ այդ ցուցանիշին պետք է հասնել մինչև 2050 թվականը»:

Էկոլուր

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի  
խմբագիր՝ Սանվել Սկրչյան  
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
011 818 517